Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2025-2026 ուս. տարի
(տևողությունը – 90 րոպե)
10 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **ՀՀ լճերից ո՞րը ՀՀ էներգետիկ համակարգի հետ առնչություն չունի**
   1. Սևանա լիճ 2. Ակնալիճը (Այոր լիճ) 3. Արփի լճի ջրամբար 4. Պարզ լիճ
2. **Կուրի և Արաքսի ավազանների միջև ջրբաժան չէ՝**
   1. Փամբակի լ-շղթա 2. Ջավախքի լ-վահան
   3. Արեգունու լ-շղթա 4. Ծաղկունյաց լ-շղթա
3. **ՀՀ նշված հողատեսակներից ո՞րն ունի ազոնալ բաշխում**
   1. Դարչնագույն 2. Գետահովտադարավանդային
   3. Սևահողային 4. Գորշ կիսաանապատային
4. **Հավասարագծերից ո՞րն է բնութագրում համաշխարհային օվկիանոսի աղիությունը**
   1. Իզոանեմոն 2. Իզոհիպս 3. Իզոհիեթ 4. Իզոհալ
5. **Միևնույն բեռն ամենամեծ կշիռը կունենա՝**
   1. Հասարակածում 2. Հյուսիսային արևադարձում
   3. Հարավային բևեռում 4. Հյուսիսային բևեռում
6. **Նշված ապարներից ամենաբարձր լուծելիությունն ունի՝**
   1. Կրաքար 2. Գրանիտ 3. Մարմար 4. Քվարց
7. **Հավասարանկյուն պրոյեկցիայով կազմված քարտեզում 25^0 զուգահեռականը**
   1. Օրթոդրոմ է 2. Իզոկոլ է 3. Լոքսոդրոմ է 4. Արևակայության գիծ է
8. **Ծովագնացության համար ճշգրիտ քարտեզների հեղինակն է՝**
   1. Պտղոմեոսը 2. Էրատոսթենեսը 3. Մերկատորը 4. Հումբոլդտը
9. **Կալիֆոռնիա նահանգում տեղումների առավելագույնը թափվում է՝**
   1. Ամռանը 2. Աշնանը 3. Ձմռանը 4. Գարնանը
10. **Աքվակուլտուրայի ծավալներով աշխարհում առաջատարն է՝**
   1. Արևելյան Ասիան 2. Հարավային Ասիան
   3. Լատինական Ամերիկան 4. Աֆրիկան
11. **Ընտրել երկիր, որտեղ կամ հզոր երկրաշարժերի կամ հրաբուխների հզոր ժայթքումների հավանականությունը ցածր է**
   1. Ինդոնեզիա 2. Նեպալ 3. ԱՄՆ 4. Իտալիա
12. **Երկրագնդի կրած փոփոխությունների վերաբերյալ պնդումներից ճիշտ է՝**
   1. Օրվա տևողությունը վերջին 300մլն տարում երկարում է
   2. Արևից հեռավորությունը մշտապես աճում է
   3. Խտությունը վերջին 300մլն տարում շարունակաբար փոքրանում է
   4. Մոլորակի ներքին ջերմությունը շարունակաբար աճում է
13. **Մետաղաձուլության ո՞ր ճյուղն է Հարավային Կորեայում և Ճապոնիայում տեղաբաշխվում նավահանգիստներում**
   1. Պղնձաձուլություն 2. Ալյումինաձուլություն
   3. Պողպատաձուլություն 4. Ոսկու ձուլում

14. **Երկրագնդի հողածածկույթի գլոբալ փոփոխությունների գլխավոր պատճառն է՝**

1. Գյուղատնտեսությունը 2. Ուրբանիզացիան
3. Օվկիանոսի մակարդակի բարձրացումը 4. Հանքարդյունաբերությունը

15. **Դիտարկելով տարածաշրջանների էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում վերականգնվող էներգետիկայի բաժինը՝ նշեք որ տարածաշրջանն է համապատասխանում 1 թվին**

1. Եվրոպա 2. Հյուսիսային Ամերիկա 3. Լատինական Ամերիկա 4. Ասիա



Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Տեղագրական քարտեզում Ա և Բ կետերի միջև ուղղության անկյունը 59^0 է, իսկ մագնիսական միջօրեականը կիլոմետրային ցանցի հյուսիսային ուղղության նկատմամբ ունի արևմտյան խոտորում՝ 2^0: Որքա՞ն է մագնիսական ազիմուտի մեծությունը:

17. Ինքնաթիռը մեկնարկել է հարավային լայնության 20° զուգահեռականից և միջինը 555կմ/ժամ արագությամբ 8 ժամ թռել է հյուսիս: Ո՞ր աստիճան զուգահեռականին է հասել ինքնաթիռը:

18. Գետի օրական հոսքը 8640000$մ^3$ է: Քանի քառակուսի մետր է կենդանի կտրվածքի մակերեսը, եթե հոսքի արագությունը 0,5մ/վրկ է:

19. Ա երկիրը տարեկան արտանետում է 5մլն տոննա ածխածին: Երկրում առկա է 49200 հա անտառ: Հավելյալ քանի հեկտար անտառ պետք է հիմնվի երկրում ամբողջ արտանետած ածխաթթու գազը չեզոքացնելու համար, եթե 1 հա անտառը կլանում է միջինում 100տ ածխածին:

20. Որքա՞ն կլիներ արևի ճառագայթների անկման առավելագույն անկյունը Հս.լ. 40° զուգահեռականի վրա, եթե առանցքի թեքությունը հորիզոնական հարթության նկատմամբ լիներ 65°:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վարդան Ասատրյան